ԱՒԵՏԱՐԵՐ

ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

«ԹՈՂՊ ՏՈՒՆԷՔ ՄԱՆՈՒ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆՔԻ ԳԱՆ» ՂՈՒԿ. ԺԸ. 16։

ՀԱՏՈՐ ԺԷ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1888 ԹԻՒ 6

ԼԻՍՊՈՆԱՑԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Բոլոր ուկալի մայրաքաղաքին, Լիսպոնայի, վրայ կը պատմուի թէ երբ մարդ գետին կողմէն կը նայի անոր պալատներուն, եկեղեցիներուն և ճերմակ տուներուն որ իրարմէ վեր կը բարձրանան բլրոյ վրայ, ուր չինուած է քաղաքը, կը ներկայանայ աչքին պերճ և չքեղ երևոյթ մը որմէ զերազանց՝ աշխարհիս քիչ քաղաքներուն մէջ կրգտնուին։ Լիսպոնայի նաւահանգիստը շատ ընդարձակ է և

ԼԻՍՊՈՆԱՑԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

շատ ապահով, և մեծ նաւատորմիղ մը կրնայ հոն պարունակուիլ և խարիսխ նետել։ Ուրեմն Լիսպոնա է ճիշդ այնպիսի քաղաք զոր Թագաւոր մը բնականպէս պիտի ուզէր իրեն մայրաքաղաք ընտրել։

Բայց այս գեղեցիկ քաղքին վրայ պատուած ամենէն երևելի իրողութիւնն է սոսկալի աղէտ մը։ Յամին 1755, Նոյեմբեր 1 ին, զոր Լիսպոնացիք կը կոչեն «Նոյեմբերի սև առաջին օրը,» սոսկալի երկրաշարժի ցնցիւն մը աւերակաց կոյտ ըրաւ քաղաքին մէկ մեծ մասը։ Բնակչաց ուրիշ նշան մը չմնաց մեռելոց արկածը, բայց միայն շառաչման ձայն մը որուն անմիջապէս յաջորդեց քաղաքը կործանող ցնցիւնը։ Իրենց բնակարաններէն փախչողներէն շատերը վաղեցին գետեզրը, և ապշեցան մնացին տեսնելով որ գետին ջուրը դրեթէ ցամքած էր։ Բայց ջուրը կրկին տեղը գարձաւ չուտով,

և 50 ոտք բարձրութեամբ ահագին կոհակ մը աւլեց տարաւ 40,000 է մինչև 60,000 անձեր, և կ'ըսուի թէ անոնց մարմիններն այնչափ խոր ընկղմեցան որ հատ մը անգամ չգտնուեցաւ դարձեալ։ Քաղաքին մէկ մասը ընկղմեցաւ, և այն տեղ ուր առաւօտուն տուներ կը կանգնէին, երեկոյին 600 ոանաչափ խոր ջրով ծածկուած էր։ Երկրաշարժին ցնցիւնը զգալի եղաւ շատ ուրիշ տեղեր ալ, բայց ուրիշ տեղ մը մէջ այսպիսի սոսկալի աղէտ չբերաւ։

Երբ Աստուծոյ զօրութիւնն այսպէս կ'արտայայտուի՝ինչպէս բոլորովին անզօր է մարդ։ Կրնայ մաքառիլ նա թշնամի մարդոց, վայրի գազանաց, և կերպով մը հիւանդութեան անգամ դէմ, բայց ի՞նչպէս կրնայ դէմ դնել երկրաշարժին որ նոյն իսկ գետինը իւր ոտից ներքև վէի մէջ անյայտ կ'ընէ։

ՍԿԻԶԲ ԵՒ ՎԱԽՃԱՆ

—o—

ՍԿԻԶԲԸ

Տասը տարեկան գպրոցի տղայ մը, Յունիս ամսոյ սիրուն օր մը մինչ վարդերը աղուոր բացուած էին տան գաւիթին մէջ և երկրագործք գաշտն էին, ղրկուած էր իւր հօրեղբօրմէն երթալ և ներկայացնելով փոխանակիը մը (ֆունտա) վճարել վաճառատան պարագը։ Փոխանակագրէն 12 դահեկան աւելնալով՝ վաճառատունէն յանձնուեցաւ տղին։ Եւ հօրեղբայրը այնուհետև չէրաւ այն ատակին խօսքը։ Այս տղան մինչ կէս օրին կը կենար դեղեցիկ երկինքի մը տակը, անոր վրայ յարձակեցաւ մեծ փոթորիկ մը։ Ըսաւ ինքնիրեն, «Տա՞մ այս ատակը հօրեղբօրս թէ սպասեմ մինչև որ հարցնէ ինձ անոր վրայ։ Եթէ բնաւ չհարցնէ, յանցանքը իրն է, եթէ հարցնէ՝ դարձեալ կրնամ տալ անոր։» Այսպէս ատակը բնաւ չդարձուց իւր հօրեղբօր։

ՎԱԽՃԱՆԸ

Աւոր վրայ անցան տասը տարիներ, նա գրագիր էր դրամատան մը մէջ։ Փոխանակագրոց տրցակ մը կը կենար դպրոցի մը մէջ որ չէր կղզուած։ Ցեսաւ զանոնք, փութթեց իւր վերարկուին մէջ և տարաւ տուն։ Հիմա բանան է, բայց այդ ճամբուն մէջ դրաւ իւր ոտքերը երբ տղայ էր տարիներ առաջ, երբ ծախեց իւր ուղղութիւնը 15 դահեկանի համար։ Այդ գիշեր կը նստէր խայտառակուած և իբրև յայտնի ոճրագործ մը։ Հօրեղբայրը շատ ժամանակէ հետէ մեռած էր։ Անոնց այն հին տունը ամայացած էր, մօրը սիրտը վշտաբեկ էր։ Բանտարկեալը գիտէր թէ ի՛նչ բան բերած էր ղինք հոն։

ՎԵՆԵՏԻԿ

Վենետիկ որ կ'անուանի «Ադրիականին հարսը,» աշխարհիս ամենէն նման ֆայէթի, և ըսել կոնսթոլին աէրոջ առնել ուր որ կը կամի։

Վենետիկ քաղաքը հիմնուեցաւ ե. դարուն, երբ Ատիլլաս, Բարբարոսաց պետը, կ'աւերէր մերձակայ գաւառները և կը սպաննէր բնակիչներէն շատերը։ Անոր ձեռքէն ազատուելու համար բնակիչք փախան այս կղզի-

ՋԻՒՒԻ ԱՐՁԱՆՆԵՐ Ի ՎԵՆԵՏԻԿ

ՌԻՒԱԼԹՈՅ ԿԱՄՈՒՐՋԸ

ները ուր կրնային դիւրաւ պաշտպանուիլ։

Առաջին խաչակրաց ժամանակը, ԺԱ. դարուն վերջին մասին մէջ, Վենետիկ սկսաւ նշաններ ցուցնել իւր ապագայ մեծութեան, և անկէ չորս դար եղաւ աշխարհիս ամենէն ղօրաւոր և ամենէն հարուստ քաղաքն էր։ Երկրաւոր պատերազմներ տեղի ունեցան հեռաւորրբրական քաղաքներէն մին է։ Շինուած է փոքր կղզիներու վրայ, և թէպէտ ունի շատ մը նեղ փողոցներ, անոր գլխաւոր փողոցներն են ջրանցները, որոցմէ իւրք 150 հատ կը գըտնուին քաղաքին մէջ։ Եթէ մարդ ուղղ անցնիլ քաղաքին մէկ մասէն միսը, միայն պարտի կանչել իւր դրան առջև կոնպոլ մը, որ նաւակ է քիչմը

վենեակոյ և Ճենովայի մէջտեղ որ իրարու նախանձորդ էին Արեւելքի վաճառականութեան համար։

Վենեակոյ դեղեցիկ չէնքերուն կարգէն է Սբ. Մարկոսի մայր եկեղեցին։ Ալանդութեամբ կ'ըսուի թէ Սբ. Մարկոսի ոսկորները Աղեքսանդրիայէ վենետիկ փոխադրուեցան յամի Տեառն 829, և նա այնուհետև համարուեցաւ քաղաքին պաշտպան սուրբը։ Մայր եկեղեցւոյ ներսի կողմը շատ շքեղ է, և անոր մուտքին վրայ կը կանգնին պղնձէ չորս ձիեր որ կընկերկայացուին պատկերին մէջ։ Մեծն Կոստանդիանոս այս ձիերը բերաւ Հռոմէ Կոստանդնուպոլիս, և 1204 ին Կոստանդնուպոլսէ տարուեցան վենեաիկ ձեռամբ վենետիկցի յաղթականաց։

Միւս պատկերը կը ներկայացունէ Ռիալթոյի կամուրջը մեծ չրանցին վրայ։ Մարմարիոն կամար է այն, և երկու կարգ խանութներ չինուած են անոր վրայ՝ խանութներուն մէջտեղը և երկու կողմերը երեք նեղ ճամբաներ։ Շինուեցաւ ճիշդ երեք հարիւր տարի առաջ։

ԱՂՕԹԵԼ ԿԵՍ ՍԵՆԵԿԻ ՄԷՋ

Պոսթընի մօտ մեծ և պատուաւոր դպրոցի մը մէջ տարբեր նահանգներէ երկու տղայք որ օտարական էին իրարու, պարագայից բերմամբ մի և նոյն սենեկի մէջ դրուեցան։ Դպրոցական չրջանին սկիզբն էր, և այս երկու տղայք անցուցին առաջին օրը՝ կարգադրելով իրենց սենեակը և ծանօթանալով իրարու հետ։ Երբ գիշերն հասաւ, այս տղոց փոքրը ըսաւ մինչն, թէ չ՞ը խորհեր որ աղեկ կ'ըլլար եթէ օրուան այն վերջին ժամուն Աստուածաշունչէն կարդային քիչ մը և աղօթք ընէին։ Բայց միւս տղան բիրտ կերպով մերժեց առաջարկութիւնը։ "Ուրեմն պիտի չառարկես, կը յուսամ, եթէ ես առանձին աղօթք ընեմ," ըսաւ փոքրը։ "Ես այսպէս սովրած եմ, և կ'ուզեմ շարունակել։" "Ես պէտք չունիմ որ և իցէ աղօթքի այս սենեկին մէջ, և չեմ ուզեր ա՜ղօթք," պատասխանեց ընկերը։

Փոքրը եղաւ կամացուկ մը, դնաց սենեկին կեդրոնը, և կանգնելով կապերտին կարանին վրայ որ սենեակը գրեթէ հաւասար երկու մասանց կը բաժնէր, ըսաւ հանդարտութեամբ. "Այս սենեկին կէսն իմ է։ Ես կը վճարեմ անոր վարձքը։ Դուն որոշէ թէ ո՛ր կէսը կ'ուզես քեզի համար։ Եւ ես միւս կէսը կ'առնեմ, և կ'աղօթեմ այն կիսուն վրայ, եթէ ոչ՝ կ'երթամ ուրիշ սենեակ մը։ Բայց աղօթել պարտիմ և պիտի աղօթեմ, դուն թէ՛ հաւանիս՝ թէ մերժես։"

Մեծը խոհոյն յաղթուեցաւ։ Մինչև այսօր կը զմայլի նա այն հաստատամիտ անկախ բնութեան վրայ որ պահպանէր իրեւ իրաւունք ինչ որ ինք կոպտութեամբ մերժեց տալ անոր իրեւ արտօնութիւն։ Քրիստոնեայ մը եթէ աղօթք ընելու թոյլտուութիւն կը խնդրէ, թոյլտուութիւն կընայ խնդրել նաև չունչ առնելու։ Չիջնում ընելու սխալ հակամիտութիւն մը կայ քրիստոնէից գործոց հետ կապակցեալ որ կարգելէ զանոնք համարձակ կերպով կատարել իրենց պարտականութիւնները։ Եթէ կայ զմայլելի բան մը, այն է արութիւնը որ կը ճանչնայ իրաւունքը և կը համարձակի ի գործ դնել զայն առանց թոյլտուութիւն խնդրելու։

ՋԱՏԿԻ ԿՂԶԻ

Խաղաղական Ովկիանոսին մէջ Հարաւային Ամերիկայի ծովեզերքէն իբր 2,300 մղոն հեռի դէպ արեմուտք կայ փոքր կղզի մը Ջատկի կղզի անունով, վասն զի առաջին անգամ՝ տեսնուեցաւ Ջատկի տօնին օրը։ Ունի միայն իբր 200 բնակիչ, բայց քիչ տարիներ առաջ այժմու բնակչաց երեք անգամն ունէր։ Միւսները գողցուեցան փերուզի նաւավաճառներէն և ծախուեցան իբրև դերի։ Կղզւոյն մէջ կը գտնուին երեք հատ մարած հրաբուխներ, բայց կղզին գլխաւորապէս արժանի է ուշադրութեան՝ քարէ մեծ արձաններուն համար որոց քանի մը հատը կը ցուցուին մեր պատկերին մէջ։ Այժմու բնակիչք չունին գործիքներ որովք կարող ըլլան չինել այնպիսի արձաններ, ոչ ալ ունին որ և իցէ մեքենաներ որովք կարող ըլլան չարժել կամ տեղափոխել այսպիսի ծանր բաներ։ Արդեօք որո՞ց գործ են անոնք։ Թերևս անհետացած ժողովրդեան մը՝ որ շատ մը աւելի մտացի էին քան կղզւոյն արդի բնակիչները։ Այս վերջինք այլ և այլ յիմարական աւանդութիւններ կը պատմեն անոնց վրայ, բայց արձանները երկար ժամանակէ հետէ դադրած են պաշտելի առարկաներ ըլլալէ։



ՋԱՏԿԻ ԿՂԶԻ

ԻՒՐ ՇԱՀԸ ՁԱՓՆՏՈՂ ՏՂԱՆ

Արեւը մարը մտած էր, և գիշերը կը սփռէր իւր վերարկուն բլրին գագաթին, և հովին և առանձին անտառին և գործուեայ գիւղին վրայ։ Մինչ հովերը կը սկսէին փչել և չարժել ծառերը, ասա և անդ լսուեր կ'երեւէին պատուհաններուն մէջէն, հասկցնելով թէ՝ թէպէտ հովը դուրսէր ցուրտ և անտանելի, կրնար խաղաղութիւն և երջանկութիւն վայելուիլ բնակարանաց ներսը։ Այս ժամուս Մր. Պրատլէ կ'անցնէր այս բլրոյ մէջ գտնուող փոքրիկ գիւղի մը մէջէն. նա յառաջ քշելով իւր ձին, որովհետև գիշերն ևս աւելի կը մթնէր, բռնեց մեծ ճամբան՝ երթալու համար մօտակայ քաղաքը ուր կ'ուզէր անցնել գիշերը։ Մինչ կ'անցնէր գիւղին վերջին տան քովէն, իրեն թուեցաւ թէ մէկը կը կանչէր իրեն, բայց կարծելով թէ տղայ մըն էր այն որ կը պռատար ուրիշ տղու մը, շատ կարեւորութիւն չտուաւ անոր։ Լսեց այն ձայնը կրկին և կրկին։ Ի վերջոյ խորհեցաւ թէ մէկը թերևս կ'ուզէր խօսել իրեն հետ, և քաշեց իւր ձիուն սանձը և նայեցաւ ետ տեսնելու համար թէ կրնա՞ր արդեօք հասկնալ թէ ով էր կանչողը։ "կեցի՛ր, պարոն, կեցի՛ր," ըսաւ փոքրիկ տղայ մը որ իւր բոլոր կարողութեամբ կը վազէր մարդուն ետևէն՝ անոր հասնելու համար։ Մր. Պրատլէ կեցուց իւր ձին, և ահա ուժգնակամ առաջ տարեկան փոքրիկ տղայ մը եկաւ հասաւ, հեւալէն իւր չունչը գրեթէ բռնուած։ "Ի՞նչ կայ, փոքրիկ բարեկամս," ըսաւ Մր. Պրատլէ։ "Սքանչելագործ կը կորնչուննես, տէր," պատասխանեց տղան, այն ինչ կարող եղաւ խօսել։ "Եւ բոլոր այս ճամբան

վաղեցի՞ր այսպէս, այդ ըսելու համար ինձ, ո՞ւր է այն, բարի ազայ։" "Ա,յո, տէր։" Մը. Պրատլէ վար ցատկեց կառքէն, և տեսաւ Թէ իւր սընտուկը որ կապուած էր իւր կառքին ներքեւը, մէկ ծայրէն քակուած էր, այնպէս որ եթէ յանկարծ ցնցման մը պատահէր, կրնար բոլորովին քակուիլ և ինկնալ կորսուիլ առանց դիտցուելու Թէ ո՛ւր ինկած էր։ "Շատ մեծ մարդասիրութիւն ըրիր, սիրելի պատակ," ըսաւ մարդը, "կրելով այս բոլոր աշխատութիւնը. ազատեցիր զիս կորնցնելէ իմ սնտուկս, և շատ շնորհակալ եմ քենէ։ Հասակդ կը բաւէ՞ ձին բռնելու մինչև որ սնտուկը կապեմ իւր տեղը," ըսաւ Մը. Պրատլէ։ "Ո՛հ, այո, տէր," ըսաւ տղան, յառաջ քալելով և բռնելով ձիուն սանձէն։ Կեցուց ձին մինչև որ Մը. Պրատլէ պատրաստ վիճակի մէջ եղաւ ճամբան շարունակելու, և այնուհետև ըսաւ, "Գիշեր բարի, տէր," և դնաց մէկդի։ "Կեցիր քիչ մը," ըսաւ Մը. Պրատլէ, չիլին մը հանելով իւր գրպանէն, "ահա քեզի դրամ մը իրրև վարձ աշխատութեանդ, նաև ասով կը յայտնեմ իմ մեծ շնորհակալութիւնս։" "Ոչ, տէր, շնորհակալ եմ," ըսաւ տղան, աչուընները անկելով մարդուն երեսը։ "Կը կարծե՞ս Թէ ատակ պիտի առնում այսպիսի բանի մը համար։" "Ա՛հ," ըսաւ Մը. Պրատլէ յետոյ երբ կը պատմէր այս դիպուածը, "տեսայ այս տղուս նայուածքին մէջ Թէ ըսդան կէս մղնէ մինչև երեք քառորդ մղոն վազած էր բարիք մը ընելու համար օտարական անձի մը, և այն ալ՝ ոչ Թէ վարձ մը յուսալով։ Ես կարող չեղայ ատիկել զնա որ ընդունէր ատակը, վասն զի հասկցայ Թէ բարիք ըրած լինելու խորհուրդը աւելի մեծ վարձք էր անոր համար քան որչափ կրնար բլլալ ատակը։ Ուստի մաղթեցի դիչեր բարի, և նա վազեց դէպ ի տուն, մինչ ես մարակեցի ձիս և դարձեալ յառաջ կ'երթայի սրարշաւ. բայց շատ անդամ կը մտածեմ այն ճամբորդութեանս և այն ազնուասիրտ տղին վրայ որ կը բնակէր բլրոյ մէջ։

ՍՈՒՂ ԾԱԽՈՒԱԾ ՀԱՆՁԱՐ

Պարսիկը կը պատմեն իրենց մէկ հոյակապ ինքնակալին վրայ որ հաստատեց սովորութիւն մը Թէ երբ նա գովեր որևիցէ մարդ մը, այն բազդաւոր անձին տուեր քսակ մը ոսկի՝ ինքնակալին ծառաներէն մէկուն ձեռամբ։ Օր մը երբ Շահը (պարսիկ ինքնակալը) որմորդութեան եղած էր, տեսաւ ծերունի մը որ ընկուզի ծառ մը կը տնկէր, և յառաջ երթալով դէպ ի նա, հարցուց Թէ քանի՛ տարեկան էր։ "Ես չորս տարեկան եմ," պատասխանեց դիւղացին։ Ծառաներէն մին յանդիմանեց ծերունին Շահին առջև այսպիսի անհեթեթ խօսք խօսելուն համար։ Դուն յաներաւի կը յանդիմանես զիս," ըսաւ դիւղացին, "ես առանց մտածելու չխօսեցայ, վասն զի իմաստունք հաշուի չեն առնուր ժամանակը որ կորսուած է յիմարութեամբ և աշխարհային հոգերով։ Վասն որոյ իմ իսկական տարիքս կը համարիմ զայն որ անցած է Աստուծոյ ծառայելով և կատարելով առ մարդիկ պարտականութիւնները։"

Շահը հաւնելով այս պատասխանին, ըսաւ, "Դուն չես կրնար յուսալոր տեսնես այդ տնկած ծառերուդ մեծնալ և կատարելութեան հասնելը։" "Ճըշմարիտ է," ըսաւ ծերունին, "բայց քանի որ մենք կ'ուտենք այլոց տնկած ծառերուն պտուղները, իրաւունք է որ մենք ալ տնկենք ծառեր այլոց օգտին համար։" Ա,յս էր նոր վարդապետութիւն Պարսկաստանի համար, և Շահը երբ լսեց, կոչեց, "կեցցե՛ս" Ա,սոր վրայ ծառաներէն մին նուիրեց ծերունին քսակ մը հարիւր ոսկով լի։ Դիւղացին երբ առաւ ոսկիները, շատ ծռելով խոնարհութիւն ըրաւ և ըսաւ, "վեհափառ Տէր, ուրիշ մարդոց ծառերը կատարելութեան կը հասնին քառասուն տարուան մէջ, բայց իմ ծառերս պտուղ տուին այն ինչ տնկուեցան։" Ա,յս խօսքին ալ հաւնեցաւ Շահը, և աղաղակեց, Լա՛ւ, լա՛ւ։ Ծերունին երկրորդ անգամ որուեցաւ քսակ մը ոսկի, որ անգամ մըն ալ ծռելով դեպին՝ խոնարհութիւն ըրաւ, և ըսաւ, "Ուրիշներու ծառերը տալին միայն անգա՛մ մը պտուղ կուտան, բայց իմ ծառերս երկու անգամ պըտուղ տուին մէկ օրուան մէջ։" "Աղնի՛ւ," գոչեց Շահը, և ասոր վրայ երրորդ քսակ մի ևս տուեցաւ ծերունուն։

ՀԱՄԱԿՐԱՆՔ ԹՈՒՉՈՅ ՄԷՋ

Պօսթընէ քանի մը մղոն հեռի, ՆիւԹընն դեղեցիկ քաղաքին մէջ աղաւնեաց վառա մը սովոր էր կերակրուիլ շատ մը հաւուց հետ։ Թէ՛ հաւք և Թէ՛ աղաւնիք աղեկ կը վարուէին իրարու հետ, և կը Թուէր Թէ կը սիրէին իրարու ընկերակցութիւն։ Օր մը փորձի դրուեցաւ անոնց բարեկամութեան ինչ աստիճան զօրաւոր լինելը, և բացորոշ հաստատուեցաւ Թէ տկարադոյն կողման առջև ինչ արժէք ունէր այն։

Կատու մը չարաճճութեամբ յանկարծ յարձակեց աղաւնեաց միոյն վրայ մինչ Թէ՛ աղաւնիք և Թէ՛ հաւք կեր կ'ուտէին ի միասին, և բռնելով զայն իւր բերանը սկսաւ փախչիլ։ Իսկոյն յուզում եղաւ։ երկու աքաղաղք և երկու երեք հաւեր ինկան հասարակաց Թշնամւոյն ետևէն, և իրենց ձայնով և կոպի կատաղի հարուածներով այնպէս վախցուցին կատուն որ բերանէն վար ձգեց աղաւնին և փախաւ։

Կատուին ետևէն ինկողները չըջապատեցին աղաւնին, և յայտնապէս կ'երևէր Թէ կ'ուզէին հասկնալ Թէ մահացու վէրք ընդունա՞ծ էր արդեօք. բայց աղաւնւոյն գլխոս մը չէր եղած, և անոր ոյժը չուտով վրան դալով կրնար Թռչիլ, որով վրայ աքաղաղք միաբան սկսան իրենց ձայնին բոլոր զօրութեամբ խօսիլ, ծանակմբելու համար իրենց մեծ յաղԹանակը։ Ա,յս դէպքը շատ յուզեց բոլոր տեսնողները, վասն զի կը ցուցնէր Թէ Թըշնամիք իրենց ընկերաց այնպիսի համակրանք կրնան տածել որ մղուին օգնել իրարու նեղութեան ժամանակ։

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿ

Մարտ ամսոյ հանելուկը լուծեցին նաեւ Մարտուանէ՝ Յարութիւն Կ. Կէօլիկեան եւ Մինաս Կարապետեան։

ՀԱՆԵԼՈՒԿ ՍՈՒԲԻ ԳԻՐՔԻՆ

0 * * * * * 0
* 0 * * * 0 *
* * 0 * 0 * *
* * * 0 * * *
* * 0 * 0 * *
* 0 * * * 0 *
0 * * * * * 0

1. Ամարոնի Թոռանց մին, 2. Նաքոլէի Թոռանց մին եւ ատացական ածական մը, 3. Հայրն Զաքարիա մարդարէի, 4. Մի քահանայապետ ժամանակակից Դաւիթ, 5. Մի արուեստաւոր երաժշտութեան, 6. Մի քաղաք Լիբանանու հովտին մէջ, 7. Քահայ մի որդին։

Երբ այս անուանները դանելով կարդաս իրարու ներքեւ չարես վերի օրինակին պէս, կ'ունենաս քառակուսի մը որոյ տրամանկիւն գիծերէն մին վերէն վար կարդացուելով կ'ըլլայ հաւատացելոց հօր անունը, եւ միւսը՝ վարէն վեր կարդացուելով կ'ըլլայ փոքր մարդարէից մին։

Կ. Պոլիս ՅՈՎՍԷՓ ՀԱՑԿԱԶՆ

Ամերիկայի Միսիոնարաց Ընկերութեան կողմէն,
Արտօնատէր՝ Ճ. Ք. ԿՐԻՆ
Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ
Ֆինճանճըար Եղբայրաց Ա՛մերիգան Խան։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ